31. ԻՐԵՔ ՔՈՍԱ ՈՒ ՏՈՒՆ ԱՎԻՐՈՂ ՀԱՐՈՆ

Քաղկի մի մեջ իրեք հատ քոսա կէղնին։ Էտոնց սովորուտեն լէ էն էր օր, հ՝ըմնօր գիկեն, ճամպներու վրեն կը կայնեն, օր գեղածի-մեղածի հ՝ըռաստ հ՝իկեր, խապեն։ Էտոնք մախսուս հ՝իրարից հեռու կը կայնեն, օր գեղածիք գինեն թե չոկ չոկ մարդիկ ին։

Ավուր մեկ դեղածի մի կով մի կիտա ուր տղին ու կըսա.

— Լաո, տա՛ր իտա կով քաղաք ծախա, հըմա իրեք օսկուց պակաս չէղնի տաս, հ՝ընճի օր մեր կով համ խորոտ ա ու համ կաթնով։

Էտ տղեն էր, լուսուն շուտ առավ կովն ու գնաց։ Էտոնց իտարեն լէ զատի մածեր էր էտ կով։

Խել մի գնաց, ռաստ էկավ հ՝առճի քոսին, օր քաղքից դուս կայներ էր։

— Օղուր էղնի, դո՞ր կէրտաս,—հարծուց քոսեն։

— Սաղ էղնիս, կէրտամ քաղաք,—ըսեց,—իմ պապ ընծի ճամպեր ա օր իտա կով տանիմ ծախիմ։

Քոսեն կըսա.—Տո՛ ի՞մալ կով, էտի հորտիկ ա, հա՛յ, մ՝ըսի կով, խըլլ կծիծղան քու վրեն։ Թե քըզի միտք կա ծախելու, եռսուն խուռուշ կիտամ։

— Ախպե՛ր, գը դեն դնա, չը գինամ՝ դո՞ւ իս ծուռ, չէ՝ ես իմ ծուռ, իմ վրեն կը ծիծղաս,—ըսեց ու քելեց։

— Հա՛, հա՛,—ըսեց քոսեն,—չուրի դու չը տանիս քաղաք, չավտընաս թե էտի հորտիկ ա։

Էտ տղեն էր փշում լէ գնաց չը գնաց՝ էն մեկել քոսեն հ՝ելավ հ՝առեճ ու ինչ օր էն հ՝առչինին հարծուց։

Տղեն հ'անկաճ չէրեց, քոսեն էլման դառծավ, ըսեց.

— Տղա՛, ուրիշ մարդու մի տա էտ հորտիկ, ինչ խըտըր օր խըլղ կիտան, ես ընտոնց վրեն տաս խուռուշ լե հ'եվելի կիտամ, կըսիմ հ'անկաճ էրա ընծի, խեղճ իս, ես քու ախկըտուտենի հ'ապով կըսիմ։

Էլման էտ տղի խելք չը մտավ, հ'ինք ուրին միտք էրեց ու քիչ մնաց օր ծռեր. «Է՞ աստված, կէղնի՞ օր էտի հորտիկ էր, իմ պապ խապեց ընծի՝ ըսեց կով ա։ Ինչ օր էղնի՝ ես լե կը տանիմ, խո էտ քաղկցիք հ'ըմեն անաստված չին, օր խապին ընծի։ Թե մեկ լե հ'ըռաստ էկավ, ըսեց՝ «Հորտիկ ա», ուրանք ուրանց աստված, կիտամ, թող էրտա»։

Փշում լե գնաց՝ քաղկին մոտեծավ։ Իտա հաղս էն մեկել քոսեն հ'ելավ հ'առեճ։ Ինչ օր հ'առճի էրկուսն ըսած են, էտ լե բան մի հ'եվելի վրեն գրեց ու ըսեց.

— Ախպեր ջան, ախըր մենք քրիստոնյա ինք, մեկ ավազանի ծնունդք, դու հ'որի՞ հմալ կէնիս, բի՛ր տո՛ւ էտ հորտիկ, ես հըմալ մարդ չիմ, ուրիշներու վրեն կրնամ օր տըսնուհինգ խուռուշ լե հ'եվելի տամ։

Ախկատ տղեն տեսավ օր իտաքան տեղ էկեր ա, հ'ըմեն լե կըսին՝ «Հորտիկ ա», հարի մկա էրկու հոկու հ'ըռաստ գիկամ քառսուն խուռուշից հ'եվելի չի տան, էտ մարդ հինգ խուռուշ լե հ'եվել կիտա»։

— Ախպե՛ր, դու տուր փարեն,—ըսեց,—ես իմ հորտիկ կիտամ քղի։

Տղեն էր, առավ փարեն, ուրախծավ, գնաց գեղ։ Հեռստավ վըր ուր պապուն ու ըսեց.

— Ապո՛, աստված քու տուն ավիրա, տո՛ դու ըպա հորտըկան կըսեր՝ «Կով ա». վիր տարա՝ ըսին՝ «Հորտիկ ա», ե լե տվեծի քառսուն հինգ խուռուշի, ուտա ուրանց գլուխ։

— Քոռնա՛ս դու, էշ ախմախ,—ըսեց պապ,—էտ վի՞րն իս տվե, խապած տ քղի։

— Ըսկի, ա՛պո, ճամպու վրեն իրեք հոկի կայնուկ են, շատ աղեկ մարդ կերևեն, ընտոնց տվի։

— Օհո, գիցա, լա՛ո, գիցա, ընտոք քոսեքն ին։ Դու սուս կեծի, բան չկա, թե քու պապ ընտըցնե հայիֆ առավ, առավ, թը չառավ, թըղ էրտան, ընտոնք լե պարղենան։

Խեղճ ապոն հ'ըմեն հնարք լե գիներ, հըմա ֆուխարի մոտ փարա չը կեր։ Ուրիշներ լե չիտեն։ Ջարնաչար հ'ելավ, գնաց ուր դըրկեցի մոտ, ըսեց.

Հայ ժող. հեքիաթներ հ. IX—12

— Աստու սիրուն էղնի, իրեք օսկի տո՛ւր ընծի, իմ էրկու հ՚աճկ տուն լե թըղ քզի էղնի։

Դրկեցն էր, իրեք օսկին տվեց, էտ մարդ լե փարեն առավ, գընաց տուն։ Վերծուց ուր էշ, տարավ քաղակն օր ծախա։

Քիչ էր մանծե օր մոտեններ քոսեքներուն, շուտ մե շուտ օսկիք կոխեց իշու ու։ Եր հասավ հ՚առճի քոսի մոտ, սուր փետով մի գրտեց իշուն, մեկ օսկին թռավ, պատավ ցած, շուտ մի վերուց դրեց ծոց։

Քոսեն օր էտ բան տեսավ, շատ ուրախծավ ու ըսեց.

— Ախպեր, քու էշ կը ծախի՞ս, ես պտի առնիմ։

Ապոն լե ըսեց.— Էտ էշ քու յոթ պապ չը կրնա առնի, իմ էշ անգին ա։

Գնաց մեկել քոսի մոտ, էլման իշուն գրտեց, էլման օսկի մի պատավ, վերուց դրեց շեպ։

Խոսք չերկնցունք, իմալ օր հ՚առճի քոսին ըսեց, էն հ՚ըմալ լե ըսեց մեկել էրկու քոսին։

Քոսեք տեսան օր, օղորտմա էտոր էշ օսկի կը թրկա, քոման հ՚իրարու վրեն, ըսին գեղածուն.

— Քու էշ պտի առնինք։

— Դու ի՞նչ խելկի տեր իք, դու կրնա՞ք ընտոր գին տաք, թե տամ լե ձզի քսան ու չորս սըհաթվա կիտամ։

Գեղածին ուր էշ ծախեց ութ հազար խուռուշի։ Սորվըցուց ըստոնց թե ի՛նչ չեշիտ պտի պային, օր օսկի թրկա։

Էն մեկ քոսեն հ՚առճի օր էշ տարավ, դեզածու ըսածի պես պայեց։ Քսան ու չորս սըհաթն օր թմավ, հարամ էղնի, փշկլից սավայի օսկի չտեսավ։

Քոսեն խելածի էր, էտ բան աշկարա չէրեց ուր ընկերտոց, օր ընտոք լե ուրին հավսրին։

Էն մեկել քոսեք լե հ՚առճինի պես էրին։ Տեսան օր թրկից խայրի բան չկա։

— Հայ հո՛,—ըսին,—էտ հայ մըզի խապեց, մեր փարեք լե տարավ։

Գեղածին էր, տուն օր գնաց խելկ խելկի տվեց, դիներ օր խոչայի հալով քոսեքներու ձեռնեն չը պրծնի։ Դուշուրմիշ էղավ, մեկ հնարք մի գտավ։

Ուր գեղածոց թամպի էրեց, հինգ օսկի տվեց, էրկու լապըգ-

տրակ բերել տվեց։ Է, չկեր փարա՞, քոռ օլսուն յոխսուլըխ՝. մեկ-ձեռ ղարկեր մեկ ջեպ՝ օսկի կը հաներ, մեկել շեպ զարկեր՝ արծաթ-կր հաներ։ Քար էր թալե, թե՞ն էր ցավծե։

Լապզտրկներն օր առավ, էն դախ թամպի էրեց ուր կնկան.

— Կնի՛կ, ես հ՝արտ կէրտամ, իտա լապզտրկներուց մեկ հետսի կը տանիմ, մեկել լե դու պայա քու մոտ։ Ես գինամ, քոսեք պըտի դան, ընծի հարծուն։ Երօր հարծուցին, ընտոց կը ճամպիս հ՝արտ՝ իմ մոտ, դու լե չը մոռնաս՝ քսան չեշիտ զատ կշինիս՝ կը հազրիս հարի մինք հ՝իգանք։ Ես էստեղ օյին մի պտի խաղամ քոսեքներու գլխուն, բալքիմ հըմալով խապիմ, լապզտրակ տամ իշու փարի-տեղ։

Աղոտրան նոր կը պածվեր, քոսեք հ՝ելան, վռազով ու հանկա-կուր գածին, տուն ավիրող զեղածի Հարոյի տուն հարծուցին։

— Տուն ավիրող Հարոն դո՞ր ա գացե։

— Ջահնամն ա,—ըսեց կնիկ,—հանտա հ՝արտ վար կէնա։

Քոսեքն օր հ՝իմցան տուն ավիրող Հարոյի տեղ, թե էրկու ոտ-ունեն, տրսվերկու լե ճարեծին, ու էն սրհատին հասան ուր մոտ։

Քիչ էր մանծե օր պտի սալանեն Հարոյին, Հարոն դառձավ ու ըսեց.

— Ախպե՛ր, ընծի հ՝ընճի՞ կսպանիք, փարեն չո՞ւզիք, հանտա փշու մի նստեք, հ՝արտ կը խլըսիմ, փարեն տուն ա, էրտանք տուն, բրտուճ մի հաց ուտինք, առեք ձեր փարեն, գածեք։ Սաղուտեն էղ-նի, ես ձըր փարեն ուտող չիմ։

Հարոն էր հըտ դահուն լապզտրակ թեռան միճեն հանեց, հը-լամունսի տուն պտի ճամպա, օր թամպա էնա կնկան՝ հաց ու զատ-էնա։

Լապզտրակն էր, Հարոյի ձեռնեն պրծնելուն պես՝ «Դո՛ր իս բլի սարեր, էկա», փախավ, պրծավ։ Քոսեք լե ավտրծան, թե օղորտ-ա լապզտրակ տուն գնաց։

— Դե՛ ախպրտանք,—էլման դառձավ Հարոն,—խորպան իմ ձըղի, փշումի հահանտինք, էլման կէրտանք տուն, ես ձըր փարեն կիտամ, ըսկի թալաշ մը քաշեք, հըմալ ինան[2] էրեք օր ես էն ձըր ըսած մարդկոց մոտեն չիմ։

Հ՝իրկուն օր էղավ, Հարոն առավ ուր ախպրտանքն ու գնաց տուն, շեմիք շենկելու պես բոռաց վըր կնկան ու ըսեց.

---

1 Կուրանա չքավորությունը (Ս. Բ.)։

2 Հավատացեք (Ս. Բ.)։

— Դե՛ կնիկ, շուտ էրա փշու մի հաց բիր, ուտինք ու էտ մարտոց փարեն տանք, թըղ հեռենան։

Կնիկն էր, քսան ջալապ զատ բերեց, էտոնք օր տեսան, շիվարան, մատներ ուրանց խածեծին, միտ ու մտավա էրեծին, թե՝ իմա՞լ էտ լապզտրակ Հարոյի խոսկեր հասկծավ ու էկավ կնկան թամպի էրեց։ Հըմա ընտոնք խապար չունեն օր լապզտրակ մ'էլ կնկա մոտն էր պահուկ։

Տուն ավիրող Հարոն էր, հ'ըմեն խելք ուր ծոց դրուկ, տեսավ քոսեքներու հ'երես, հ'իմցավ օր էտոնք լապզտրկի համար միտք կէնին, դառծավ ու ըսեց էտոնց.

— Ախպրտա՛նք, հաց կերեք, հերք ա միտ ու մտավա էնիք, հա՛ մկա ծըր փարեն կիտամ։

Քոսեքն են, ուրանց հաց կերան, չը կերան, միտք կէնեն։ Տուն ավերող Հարոն բոռաց.

— Կնի՛կ, շուտ բալնիք բիր էտոնց փարեք իտամ, թըղ էրտան։

Կնիկ փշու մի հ'անկան բերեց բալնիք, Հարոն էր, մախսուս հերսոտավ, փետ վերուց, պտի շարտեր կնկան, օր քոսեք չէղնեն։

— Տո՛ հայ, դու աստու հ'երեսե՞ն իս թափե,—ըսին քոսեք,— փարեն քզի հալալ էղնի, մենք լապզտրակ պտի գնինք։

Հարոն դվա թե լավեն չէ լապզտրակ տալու, խստու կըսա.

— Ես չիտամ, ինչ օր տվի, ի՞նչ խեր տեսա։

Քոսեք՝ ուրանք շատ փարապաշտ մարդիկ են, հոկի ուրանց ու մեկ փարեն դիե մ'էր։ Էտոր համար հ'իրարու ըսին թե.

— Իտա լապզտրակ լե առնինք, բալկի մի էտոր մեչ աշխատինք, մեր զաբարն հանինք։

Ի՞նչքան փարա տված են իշուն, էնքան լե տվին, լապզտրակն առան ու գածին։

Եբօր քաղկին մոտեծան, հ'ուզեծին գեղածու լապզտրակ շոպեն, հանեցին պայուկ տեղեն ու թորկեծին օր էրտա ուրանց կնկտոց թանպի էնա՝ հաց ու զատ էփին, հազրին։

Եբօր գածին ուրանց տներ, հարամ ու ռաշ էղնի, նա՛ հաց ին պատրաստած, նա՛ զատ։ Թալեծին կնկտոց գետին ու ծեծեծին։

Կնկտիք հ'երտում, պատռտում կերան թե.

— Վո՛յլա, մարդ չէկե, մըզի բան թամպի չէրեր ա։

Քոսեք ծռան, խելկեր ուրանց թռուծին։ Էլման հ'ելան, գածին տուն ավիրող Հարոյի տուն։

Տուն ավիրող Հարոն էլման հառեվնե ուր թապտիր տեսեր էր։

Քերեր էր փկլուճ մի՝ մեջն արուն լցեր էր ու հազրեր էր, հ՚ետև դարձեր էր, ըսեր էր ուր կնկան.

— Կնի՛կ, ես դինամ, էլման պտի դան էտ քոսեք։ Իտա փկլուճ բիր կապա բոկիտի տակ, ես կըսիմ, կը հեռոտիմ, թե էտոնց փարեն բիր, դու հ՚անկաճ մ՚էնի։ Էտ հըմալ քենիմ անկամ կըսիմ, դու քգի հ՚ոն մը՛ դնի։ Հ՚ընդախ կը տեսնիմ օր բոշ ա, գելնիմ հըլամունսի իտա սուր գանկով քզի կը մորտիմ, հըմա չը վախենաս, փկլուճ կը կտրիմ, դու լե էն վախտ քզի թալ մեռուկ։

Քոսեք դուռ բաձին-չբաձին, նես մտան-չմտան, Հարոն խաստի հավատ պնտեց.

— Կնի՛կ, դը շուտ, էտ մարտկոց փարեն բիր, էղանք ամոտով, հըմա օր հանկձուձիր, քու սպանել հախ կէնիմ։

Կնիկ հ՚անկաճ չէրեց, Հարոն էլման բոռաց.

— Շա՛ն ախճիկ, չէ՞ կըսիմ փարեն բի՛ր, է՛։

— Խիամատին թըղ բերվի, բալնիք իմ մոտ չէ։

— Հալլա՛, հալլա՛, ես իմալ էնիմ իտա կնկա հետ, էլ ըսի՞մ, անըսկամ, դրռ դու կայնե՞ր իս։

— Ջայնմին ըսա, ի՞նչ կա, ախր կըսիմ բալնիս իմ մոտ չէ, ախճիկ տարեր ա՝ կորձուձեր ա։

— Կնիկ, դու հ՚որի՞ն հըմալ կէնիս. քու արունք առեր իս քու հ՚աճք, կէնիս օր քզի սպանի՞մ, շան ու գիլու փայ էնիմ։

— Սպանի՞ս, հաղմ էլ ըսա, սպանել հըմալ խոլա՞յ ա, ընձի՞ սպանիս։

Ծտի խոսկերն օր լսեց, Հարոն սուտմա կատղավ, հ՚աճկեր թըռավ գակատ։ Կշտեն քաշեց յան բուճաղին, հասավ կնկա ծամեր բռնեց, զարկեց գետին, յան բուճաղին գրեց վզին՝ քաշեց։ Մեկ լե տեսնիս օր արուն տան մեջ դոլավ, շորս դիեն ծավոլեց։

Քոսեքն օր էտ բան տեսան, հ՚ախու մռտներ ուրանց յոթ տեղով ճղավ, թե.— Մենք էղանք արընկտեր։

Շիվարան, մկա չը կռնան օր դուռ գտնին, փախնին։

Հալալ էղնի Հարոյին արընկտիրուտեն։ Շուտ մի դառձավ քոսեքներու վրեն՝ օր դուռ կորձուձած չը կռնեն գտնեն։

— Հա՛,—ըսեց,—ձըր սիրտ հ՚ըռատա՞վ, մարդ մը լե տվեձիք սպանել, դո՞ր պտի փախնիք օր իմ ձեռնեն պրձնիք։

Հարոյի լեզուն կըսեր, հըմա սիրտ չըսեր։ Էն գուզեր մինակ, օր քոսեք հեռենան։

Քոսեք չուրի դուռ գտան՝ հոկի ուրանց էղավ կորեկի մի հատ, սակի մարտուտենից հ՚ընկան.

— Թող հրմալ վատա էղնի,—ըսեծին,—օր հուծկա ու դիեն, քյանի արընկտեր Հարոյի ձեն իտա էրկիր գիկա, էլ ոտ մըզի իտա էրկիր պտի չը թալինք ու չիկանք։

Գածին ու հեռեծան, հրմա գինա՞ս թե ի՞նչ էրկրներ հ՚ելան դուս։ Ուրանց գինալով, հրլամունսի էղած են արընկտեր։ Ցուխարեք ժողվեծին գտլով, շերպով տվին դուս։ «Ահտ ահտա խալմազ»[1], կըսա թուրք. հ՚ինք անիծուկ ա, հրմա ուր խոսքն օրշնուկ։

Դառնանք արընկտեր Հարոյին։ Կնիկ, սատանե՞ն էր մտե հ՚ինք. սաղ սալամատ հ՚ելավ նստավ։ Նոր հ՚իրարու հետ քեֆ էրին։ Կերան, խմեծին։ Ուրանց կտռտուկ շորեր թաժածուծին, էլ հրմալ էղավ օր արընկտեր Հարոյի քրկի փեշեր հրտ գետնին քաշ կէրտեր։ «Ծռու հաց, անոթու փորն ա»։

Էտոնք էտ քեֆի մեջ թըղ մնան, քոսեք լե մըչ ասսու կրակին։

---

1 Զրկանքը զրկողին չի մնա (Ծ. Բ.)։